# ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

## *CENTER OF DEMOCRACY AND LAW NGO*

ք.Երևան, Անդրանիկի փ. 76-18 Yerevan, Andraniki Str. 76-18 Հեռ. / tel. /374 99/ 78 87 99; E-mail: armjur@yahoo.com


06.07.2019թ.

Գեղարքունիքի մարզպետ

պարոն Գ. Սանոսյանին

Հասցե՝ ք. Գավառ, Գրիգոր Լուսավորչի 36

Հարգելի պարոն մարզպետ,

Խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1) քանի՞ անձից եք ստացել դիմում, հարցում կամ բողոք www.e-request.am կայքի միջոցով՝ տարեկան կտրվածքով, դրա կիրառման սկզբից մինչև 2019թ. մայիս ամիսը ներառյալ, 2) այդ անձանցից քանիսն են լրագրող, փաստաբան, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություն, 3) ի՞նչ եղանակով է նրանց ուղարկվել պատասխանը. էլեկտրոնային փոստով թե՞ թղթային կրիչով, առձեռն թե՞ փոստային ծառայության միջոցով, 4) ի՞նչ խնդիրներ են առկա www.e-request.am կայքի կիրառման ընթացքում, որոնց լուծումը կայքի կիրառումն ավելի արդյունավետ կդարձնի:

Խնդրում եմ տեղեկությունները տրամադրելիս նշել նաև կին/տղամարդ հարաբերակցությունը և հայցվող տեղեկատվությունը մեր armjur@yahoo.com էլեկտրոնային փոստին ուղարկել մինչև հուլիսի 13-ը:

Կանխավ շնորհակալ եմ:

Հարգանքով՝

Արման Խաչատրյան
«Ժողովրդավարության և իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ

Գեղարքունիքի մարզպետարան
ՆԱ. ԱԿՆԵՐԻ ԹԱԺԻՆ
Մուտք թիվ 1Ա-9280-2019
09. 07 2019թ.

«Ժողովրդավարության և իրավունքի կենտրոն» ՀԿ
ք.Երևան, Անդրանիկի 80, բն.43




RR
RR268811943AM

Գեղարքունիքի մարզպետ
պարոն Գ. Սանոսյանին
Հասցե՝ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ,
Գրիգոր Լուսավորչի 36